Արձանագրություն N 3
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 հունիսի 2025թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ և Առափի բնակավայրերի տարածքում Ախուրյան գետի հունի մաքրման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2025 թվականի հունիսի 5-ին, ժամը 16:00-ին (հրապարակվել է 26.05.2025թ.):

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ 31.05.2025թ. ներկայացվել է հարցում, որին 02.05.2025թ. տրվել է պարզաբանում և հրապարակվել է հայտարարություն:

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	էլեկտրոնային հասցե
«ՇԻՆԱՇԽԱՐՀ1» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մազ, գ. Առինջ, Վ. Տերյան թղմ. 1-ին.փող., 8-րդ հող. 044 291945	amshinashkharh@mail.ru
«Կամուրջ շին» ՍՊԸ և «Հոլյուն» ՍՊԸ կոնսորցիում	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Սյունիքի 14շ, բն. 13 093 355199	sgk_karapetyan@mail.ru

	Ք. Երևան, Նորաշխարհային փ. 17,բն. 24 033 030050	
«ՄԵՐԶՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ	ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան, Շրջկենտրոն 094 444432	undermoscow89@mail.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 91 670 102 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ և Առափի բնակավայրերի տարածքում Ախուրյան գետի հունի մաքրման աշխատանքներ				
1	«ՇԻՆԱՇԽԱՐՀ1» ՍՊԸ	62 962 958	12 592 592	75 555 550
2	«ԿԱՄՈՒՐՋ ՇԻՆ» ՍՊԸ և «ՀՈԼՅՈՒՆ» ՍՊԸ կոնսորցիում	72 500 000	14 500 000	87 000 000
3	«ՄԵՐԶՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ	73 000 000	14 600 000	87 600 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՇԻՆԱՇԽԱՐՀ1» ՍՊԸ-ն, «ԿԱՄՈՒՐՋ ՇԻՆ» ՍՊԸ և «ՀՈԼՅՈՒՆ» ՍՊԸ կոնսորցիումը և «ՄԵՐԶՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ն՝ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացրել են հայտի ապահովումները:

Մասնակից **«ԿԱՄՈՒՐՋ ՇԻՆ» ՍՊԸ և «ՀՈԼՅՈՒՆ» ՍՊԸ կոնսորցիումի** հայտով չեն ներկայացվել հրավերի 2.4.1 կետի 1-ին ենթակետով պահանջվող լիցենզիան և ներդիրը, 3-րդ ենթակետով պահանջվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով նախատեսված տեղեկատվությունը՝ համաձայն հավելված N 1.4-ի և դրանով պահանջվող փաստաթղթերը: Հայտով ներկայացված՝ կնքվելիք պայմանագրի համար առաջարկվող տեխնիկական միջոցների (մեքենա-մեխանիզմների) մասին Հավելված 1.2-ում՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ և 10-րդ տողերով ներկայացված տեխնիկական միջոցների սեփականության կամ օգտագործման (վարձակալության) իրավունքը հավաստող փաստաթղթերը (պայմանագիր, տեխնիկական անձնագիր և այլն) ներկայացված չեն, ինչպես նաև 7-րդ տողով ներկայացված էքսկավատոր դրագլայնի մակնիշը չի համապատասխանում ներկայացված վարձակալության պայմանագրի տեխնիկական միջոցի մակնիշին և ներկայացված չեն կից հիմնավորող փաստաթղթերը (տեխնիկական անձնագիր և այլն):

Մասնակից **«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ի** հայտով ներկայացված՝ կնքվելիք պայմանագրի համար առաջարկվող տեխնիկական միջոցների (մեքենա-մեխանիզմների) մասին Հավելված 1.2-ի 14-րդ տողի դրագլայն էքսկավատորի վարձակալության պայմանագիրը ներկայացված չէ:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Համաձայն ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով հրավերի 8.9 կետի, մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից **«ԿԱՄՈՒՐՋ ՇԻՆ» ՍՊԸ և «ՀՈԼՅՈՒՆ» ՍՊԸ կոնսորցիումին և «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ին՝** մինչև կասեցման ժամկետի ավարտը **(23.06.2025թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Կ. Ալեյան
	_____	Կ. Սարգսյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան